«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՀԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-ի N 318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

- 1-ին հավելվածում՝

ա. 1-ին կետի 10-րդ ենթակետում «ծառայության» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները,» բառերը, իսկ «փորձաքննություն» բառից հետո լրացնել «, ռազմաուսումնական հաստատությունների դիմորդների դեպքում՝ ԷխոՍԳ հետազոտություն, իսկ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցառումներին ներգրավված քաղաքացիների դեպքում՝ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա իրականացվող հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» բառերը,

բ. 1-ին կետում լրացնել 23.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1) Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում կամ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների արդյունքում խեղում, վնասվածք, հիվանդություն ստացած անձինք՝ արտակարգ իրավիճակներում

կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության մասով.»,

գ. ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 26-րդ և 27-րդ ենթակետերը.

- 3-րդ հավելվածում՝

ա. 8-րդ կետի 18-րդ ենթակետում «շահառուներին» բառից հետո լրացնել «, զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներին» բառերը,

բ. 8-րդ կետից հետո լրացնել 8.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1 Զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներին պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է նաև բուժման համար անհրաժեշտ՝

- մասնագիտական խորհրդատվությունները.
- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները (ներառյալ հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները՝ առանց տարեկան քանակային սահմանափակման).
- դեղորայքի (այդ թվում՝ 1 միավորի (ամպուլա, հաբ, ֆլակոն և այլն) արժեքը 15000 դրամը գերազանցող դեղամիջոցների), արյան կամ նրա բաղադրիչների, բուժման ընթացքում օգտագործվող բժշկական սարքավորումների (կարող գլխիկներ, խարիսխներ, պտուտակներ և այլն), իմպլանտների, էնդոպրոթեզների, սարքերի և այլ կարգավորիչ բժշկական հարմարանքների արժեքի փոխհատուցումը:».
- 4-րդ հավելվածում՝

ա. 2-րդ կետում «հիմքերը» բառից հետո լրացնել «, եթե այլ բազաների հետ փոխգործելիության միջոցով էլեկտրոնային առողջապահական համակարգի կողմից չի հաստատվում շահառու հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությունը» բառերը,

բ. 12-րդ կետի 1-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «Պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում սահմանված անձինք.» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան